# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<< 25 >> 04 2013թ. N: 100-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ << ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ>> ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 30-ի N 23-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի>> 6-րդ և 7-րդ կետերի դրույթները.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝**

Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու <<Միջազգային Կարմիր Խաչի>> անվան պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2013 թվականի ապրիլի 26-ին անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Սեյրան Պետրոսյան | - ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ (նախագահ) |
| Նորիկ Գրիգորյան | - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ (քարտուղար) |
| Վազգեն Հարությունյան | - ՀՀ Շիրակի մարզպետի խորհրդական |
| Լիպարիտ Մարտիրոսյան | - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ |
| Ալբերտ Մարգարյան | - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ |
| Հովհաննես Հովհաննիսյան | - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ |
| Մարիամ Գյոդակյան | - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ |

. . . . . .

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆԻ